

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀՌՈԴՈՍ ԿՂԶՈՒՄ

Սեպտեմբերի 24-ից մինչև հոկտեմբերի 1-ը, Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Տ. Աթենագորաս Արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ, Հռոդոս կղզում կայանում է Օրթոդոքս եկեղեցիների համագումար, որին մասնակցելու հրավիրվել էր նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Օրթոդոքս եկեղեցիների այդ համագումարին որպես դիտորդ և հյուր մասնակցում է Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը։

Հռոդոսում, սեպտեմբերի 24-ին, հանդիսավոր իրադրության մեջ բացվում է համագումարը օրթոդոքս հունաց Ավետման Մայր եկեղեցում սուրբ պատարագի մատուցմամբ, որին ներկա են լինում համագումարին մասնակցող օրթոդոքս բոլոր եկեղեցիների պաշտոնական պատգամավորներն ու հյուրերը և քույր եկեղեցիների ներկայացուցիչները, ստեղծելով քրիստոնեական եկեղեցիների առաջին դարերին հատուկ սիրո և միության հոգևոր մթնոլորտ։

Հետմիջօրեի ժամը 4-ին, նույն եկեղեցում, աղոթքով և պաշտամունքով կատարվում է եկեղեցական համագումարի հանդիսավոր բացումը, նախագահությամբ Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Տ. Աթենագորասի մասնավոր ներկայացուցիչ Տ. Խրիսոստոմոս միտրոպոլիտի, որն իր բացման խոսքում, ողջունելով բոլոր ներկաներին, խոսում է այդ պատմական համագումարի նպատակի մասին, որ է «Օրթոդոքս եկեղեցու ձայնն ու պատգամը հասցնել իր հոտին»։

Այնուհետև համագումարի առաջին օրը ելույթներ են ունենում օրթոդոքս եկեղեցիների պաշտոնական ներկայացուցիչներ, որոնցից հետո առաջինը հանդես է գալիս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը ողջույնի հետևյալ խոսքով.

«Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց, կողջունենք Օրթոդոքս եկեղեցիներու այս համագումարը և ի սրտե հաջողություն կմաղթենք։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կաղոթե, որ համագումարին ներկայացված խնդիրները լուծվին Ս. Հոգիին առաջնորդությամբ։

Այս առթիվ, հանուն Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գոհունակություն և սրտագին շնորհակալություն կհայտնենք Նորին Սրբություն Աթենագորաս Տիեզերական Պատրիարքին, որ ի շարս այլ եկեղեցիներու, Հայաստանյայց Եկեղեցին ալ պատիվ ըրած է հրավիրելով այս համագումարին. մենք ասիկա կնկատենք երկու եկեղեցիներու քրիստոնեական սիրո և եղբայրական զգացումին գեղեցիկ արտահայտությունը։

Ճշմարիտ է, որ դարեր, նախապաշարումներ և զանազան անհասկացողություններ թանձր վարագույրներ քաշած են Քրիս-

տոսի կեղեցիներու միջև, զրկելով զանոնք իրարու հետ սերտ հարաբերութենե և գործակցութենե, բայց կխորհինք, թե Աստուծոսերը և քրիստոնեական ոգին վեր են այս բոլորեն և տիրապետող պետք է ըլլան մեր հարաբերություններուն մեջ։

Մինչև հիմա քրիստոնեական եկեղեցիները սովոր են ընդհանրապես շեշտ դնել իրենց տարբերություններուն վրա. բայց ժամանակն է, որ խորհին հասարակաց եղող կետերուն վրա, որոնք շատ ավելի հիմնական են և կարևոր. այդպիսով միայն սիրո և գործակցության կապը կհաստատվի եկեղեցիներու միջև ու կարելի կըլլա Աստուծո թագավորությունը հաստատել երկրի վրա»։

Հռոդոսի Օրթոդոքս եկեղեցիների համագումարին մասնակցում են Ստամբուլի Հունաց Տիեզերական, Մոսկվայի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սերբիայի Օրթոդոքս Պատրիարքությունները, Հունաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի Օրթոդոքս Եկեղեցիները։

Արևելյան եկեղեցիներից համագումարին մասնակցելու հրավիրված են Հայ, Ղպտի, Եթովպական, Ասորի և Մալաբար միաբնակ եկեղեցիները։

Որպես դիտորդ հյուր, Օրթոդոքս եկեղեցիների համագումարին մասնակցում են նաև Կաթոլիկ, Հին Կաթոլիկ, Անգլիկան, ԱՄՆ-ի Episkոպոսական եկեղեցիները, ինչպես նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչներ։

Սեպտեմբերի 25-ին, երկուշաբթի, համագումարն սկսում է օրակարգում դրված հարցերի քննարկմանը։ Համագումարի օրակարգը նախապես պատրաստվել և ուղարկվել էր Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի կողմից։

Օրթոդոքս եկեղեցիների Հռոդոսյան այս համագումարը եղել է նախապատրաստական բնույթ ունեցող ժողով, որը, հաջորդական 5—6 նիստերում, մի շարք փոփոխություններով և հավելումներով, քննարկել է օրակարգում ներկայացված հարցերը, առանց վերջնական որոշում և վճիռ կայացնելու։ Այդ գործը կկատարի առաջիկայում գումարվելիք Օրթոդոքս եկեղեցիների Նախա-Սինոդը, որտեղ նորից կքննարկվեն Հռոդոսի համագումարում կազմված նախագծերը և օրակարգի նյութերն ու բերված առաջարկները, և վերջնականապես վավերացվելուց հետո կկանոնականացվեն և կմտնեն կիրառության մեջ։

Համագումարը քննարկել է հետևյալ հարցերը.

Ա. Հավատք և դավանանք.

Բ. Աստվածային պաշտամունք (աստվածպաշտություն).

Գ. Վարչություն և եկեղեցական կարգ.

Դ. Օրթոդոքս եկեղեցիների հարաբերությունները իրենք իրենց մեջ.

Ե. Օրթոդոքս եկեղեցիների հարաբերությունները աշխարհը մյուս քրիստոնյաների հետ.

Զ. Օրթոդոքսություն աշխարհի մեջ.

Է. «Ներողություն»-ը («Թողություն»-ը) Օրթոդոքս եկեղեցու մեջ.

Ը. Հասարակական հարցեր.

Թ. Օրակարգի տակ դրված է մասնավորաբար Արևելյան Հին Եկեղեցիների հետ հարաբերության հարցը հետևյալ ստորաբաժանումներով.

ա. Բարեկամական հարաբերություններ միություն հաստատելու համար նրանց հետ.

1. Փոխադարձ այցելություններով.

2. Պրոֆեսորների և ուսանողների փոխանակությամբ.

3. Շփումներով աստվածաբանական խնդիրների շուրջը։

բ. Ուսումնասիրություններ պատմության, հավատի, պաշտամունքի և վարչական կազմի սույն եկեղեցիների մեջ։

գ. Նրանց հետ գործակցություն՝

1. Տիեզերական ժողովների մեջ.

2. Գործնական բնույթ ունեցող հարցերի շուրջ։

Հռոդոսի համագումարը ընտրել է հատուկ հանձնաժողով Զաղրեբի (Սերբիա) միտրոպոլիտ Դամասկինոսի գլխավորությամբ, ուսումնասիրելու համար արևելյան Հայ, Ասորի, Ղպտի, Հաբեշ և Մալաբար միաբնակ եկեղեցիների հետ հարաբերությանց և միության հարցերը։

Արևելյան վերոհիշյալ եկեղեցիների ներկայացուցիչները երկու անգամ հանդիպումներ են ունեցել օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների հետ՝ եկեղեցական միության հարցի վերաբերյալ և միաձայն որոշում են ընդունել, որ յուրաքանչյուր ուրույն եկեղեցի հանգամանորեն ուսումնասիրի համագումարի կողմից առաջարկված եկեղեցական միության հարցը, իր եկեղեցական վերին իշխանության հետ, և ապա բերի այդ առաջարկը, ի պահանջել հարկին փոփոխություններով և նոր հավելումներով, առաջիկայում գումարվելիք Օրթոդոքս եկեղեցիների Նախա-Սինոդին։

Հռոդոսի Օրթոդոքս եկեղեցիների համագումարը փակվում է սեպտեմբերի 30-ին, շաբաթ օր։

Կիրակի, հոկտեմբերի 1-ին, Հռոդոսի Մայր Եկեղեցում տեղի է ունենում գոհաբանական սուրբ պատարագ՝ համագումարի

բարեհաջող վերջավորության համար։ Պատարագի ընթացքում կարդացվում է համագումարում ընդունված հետևյալ պատգամը.

«Փա՜ռք համագոյակից, կենարար և անբաժանելի Սուրբ Երրորդության։

Սիրելյալ եղբարք իմ և մանկունք ի Քրիստոս, «շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ»։

Այժմ, երբ մեր միակ Հովիվ Քրիստոսը կամեցավ թույլ տալ մեզ, որ մենք բոլորս միասին հավաքվենք Աստուծո հովանավորությունը վայելող Հոռոմս կղզում և որպես պատգամավորներ հնարավորություն ունենանք, մեր ուժերի ներած չափով, վկայելու մեր Եկեղեցու մի և անբաժանելի լինելու մասին, հայտնելով մեր միասնությունը և դրանով իսկ արձագանքելով մեր սույն ժողովի նպատակին ու մեր գործի մասնավոր նշանակությանը, մենք կարող ենք այսօր, խոնարհամտությամբ և ամենայն բարեսրտությամբ, մեր խոսքն ուղղել բոլորին՝ Աստուծո կողմից առատապես օրհնված մեր սույն հավաքույթի բարեհաջող փակման առթիվ։

Աստուծո և մարդկանց նկատմամբ մեր պատասխանատվության գիտակցությամբ հայտարարում ենք, որ մենք՝ այստեղ եղբայրական կատարյալ համերաշխություն ոգով քննարկեցինք մեր առաջ դրված սահմանափակ խնդիրները և միաձայն կաղմեցինք ցուցակն այն խնդիրների, որոնք պետք է առաջիկայում դումարվելիք Նախա-Սինոդի քննարկմանը ներկայացվեն, խնդիրներ, որոնք վաղուց ի վեր մեր տեղական օրթոդոքս եկեղեցիների և առհասարակ քրիստոնյա աշխարհի մտահոգության առարկան էին դարձել։ Այդ խնդիրներն այսօր ավելի որոշակիորեն ձևակերպվեցին և իրենց արտահայտությունը գտան տվյալ ցուցակում, որպեսզի ըստ պարտ ու պատշաճի ուսումնասիրվեն և քննության առնվեն մեր առաջիկա Նախա-Սինոդի կողմից և, Աստուծո շնորհիվ, համապատասխան բարեհաջող ու վերջնական լուծում ստանան Տիեզերական Սինոդում։

Մեր հավաքույթն այստեղ շատ մեծ իրադարձություն հանդիսացավ։ Եվ մենք ոչ մի ժամանակ չշեղվեցինք այն հիմնական մտքից և այն վստահությունից, թե ամենուր սփռված մեր Եկեղեցու զավակների աչքերը, այլև համայն աշխարհի ուշադրությունը ուղղված էին դեպի մեզ և դեպի մեր գործը։ Զափազանց երկար մի ժամանակաշրջանից հետո առաջին անգամն էր, որ Օրթոդոքս Եկեղեցին իր լրիվ կազմով համախմբվեց այսպիսի ներկայացուցչական մի ժողովում։ Այդ բոլոր օրերի ընթացքում, մենք՝ եկեղեցիների բոլոր պատգամավորներս, խորապես գիտակցեցինք այս իրադարձության կարևորությունը և հավատացյալ աշխարհի մեծ ակնկալության հանդեպ մեր պատասխանատվությունը։

Մենք հեռանում ենք այս ժողովից մեր հավատի, մեր հույսի և սիրո մեջ առավել զորացած և վստահ Օրթոդոքս մեր Ս. Եկեղեցու միության ուժին։

Մենք մեր առաջ նպատակ դրեցինք ներկա ժամանակներում մեր Եկեղեցու պատասխանատվությունը դարձնել գիտակցական, ընդգծել մեր հավատացյալների և համայն մարդկության կյանքին վերաբերող խնդիրները, և մենք կարող ենք բոլորին վստահեցնել, որ Օրթոդոքս Եկեղեցին կատարելապես գիտակից է այս բոլորի նկատմամբ իր ունեցած պատասխանատվություններին ու պարտավորություններին։

Մենք կարծում ենք, որ տեղական Օրթոդոքս Քույր Եկեղեցիները, պահպանելով մեր հայրերի փրկարար հավատը, կմնան այս միության մեջ, որի պատկերը Ամենասուրբ և Միասնական Երրորդության խորհրդավոր ու գերբնական միությունն է Աստվածության մեջ։ Եվ այս խորապես ներքին ու անբաժանելի միությունը, ներկա պատմական դեպքում, ներկայացվեց մեր Օրթոդոքս Եկեղեցու կողմից։

Երկրի վրա Եկեղեցու գոյության պատկերը արտահայտված է սիրո միությամբ, «Նոր Օրենքի» կատարումով (Յովհ. ԺԳ 14)՝ տրված Տիրոջ կողմից, որն Իր սուրբ զորությամբ մեզ պարգևեց այն, ինչ անհրաժեշտ է կյանքի և բարեպաշտության համար (Բ Պետրոս Ա 3)։

Մեր Եկեղեցին երբեք չի շինված պատերով ու տանիքով, այլ հավատով ու կյանքով։ Ս. Հոգու շնորհիվ է, որ Եկեղեցու մեջ ու Եկեղեցու միջոցով յուրաքանչյուր մարդու հոգին կենդանանում ու զորանում է, և Եկեղեցին ավետում է բարի լուրը երկրի վրա. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի ևետ մեզ զպաշտօն հաշտութեան», ինչպես ասում է ազգերի աստվածային առաքյալ Ս. Պողոսը (Բ Կորնթ. Ե 18)։

Այսօր, ավելի քան երբևէ, կոչված լինելով կատարելու Քրիստոսի պատվիրանը, կրելու միմյանց բեռները և ապրելու այնպես, «որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ» (Ա Տիմոթ. Գ 15), մենք հավատում ենք, որ մեր ընթացքը ինչպես այսօր, այնպես էլ ապագայում կլինի այն, ինչ որ եղել է մեր Եկեղեցու պատմության անցյալ նշանավոր դարերի ընթացքում, շինության

և Քրիստոսի միակ մարմնին նեցուկ կանգնելու մի ընթացք «ի փրկութիւն նուաճութեան, ի գովեստ փառաց Նորա» (Եփես. Ա 14)։

Ուստի, երկրի վրա ապրող և նույն արյունից ստեղծված բոլոր մարդկանց հիգիներ համար Աստուծո առջև մեր զգացած մեծ պատասխանատվության գիտակցությամբ տոգորված և, միևնույն ժամանակ, գտնվելով Մի, Կաթողիկե և Առաքելական Ս. Եկեղեցու հովանու տակ՝ կատարելու համար Տիրոջ կողմից և Նրա անունից տրված սիրո պատվիրանը, մենք խնդրում ենք Ձեզ բոլորիդ, հեռավոր և մերձավոր եղբայրներ մեր, «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկ. Թ 49), Քրիստոսի խաղաղությունը, մեր Աստուծո խաղաղությունը։

Զորացած մեր եկեղեցիների, նրանց առաջին հովիվների և ժողովրդի օրհնություններով ու աղոթքով, որոնց բարեպաշտ ոգու կրողներն ու թարգմաններն ենք մենք, սիրո ողջույն ենք ուղարկում Արևելքի մեր բոլոր հարգարժան եղբայրներին, որոնց հետ մենք կապված ենք հոգու և մտքի մերձավորության դարավոր ու անքակտելի կապերով։ Սիրո ողջույն ենք ուղարկում նաև Արևմուտքի մեր այն եղբայրներին, որոնց հետ մենք երբեք չենք դադարել գործակցելուց, ի կատարումն Տիրոջ պատվիրանի՝ «զի ամենեքեան մի իցեն», պատվիրան, որի համար մեր Ս. Եկեղեցին երբեք չի դադարում աղոթելուց։

Այս բոլորից հետո, մենք հույս ունենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որն իր լրումին է հասցրել մեր հավատը, կպահպանի ինչպես մեզ, այնպես էլ ամբողջ աշխարհը Իր սիրո և շնորհի մեջ, և աղոթում ենք, որ Խաղաղության Իշխանը՝ Հիսուս Քրիստոսը պահպանի խաղաղությունը երկրի վրա և բարի կամք պարգևի մարդկանց։

Սերը վանում է երկյուղը։ Մեր Տեր Աստվածը թող փրկի Իր Եկեղեցին։

Եղբայրնե՛ր մեր, «Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ ձեզ» (Բ Յովհ. Ա 3)։

Ամէն»։

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օր, պատգամավորները մեկնում են Աթենք և առաջնորդվում Մայր Եկեղեցի, ուր տեղի է ունենում գոհաբանական աղոթք սիրո և քրիստոնեական եղբայրության հոգևոր մթնոլորտում։

Պատգամավորները չորս օր մնում են Աթենքում, հանդիպումներ են ունենում միմյանց հետ, կարծիքների ազատ փոխանակություն կատարում կրոնական հարցերի և եկեղեցական միության վերաբերյալ հիմնական խնդիրների շուրջ։

Հոկտեմբերի 6-ին փակվում է Օրթոդոքս Եկեղեցիների Հոդոսի համագումարը, որը սահմանված է պատմական մնալու ոչ միայն Օրթոդոքս Եկեղեցիների, այլև բովանդակ քրիստոնեական աշխարհի կյանքի մեջ, արդի պայմաններում որպես առաջին քայլը քրիստոնեական եկեղեցիների սիրո և միության նոր փորձերի։